Grant Thornton

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. + 374 10 260 964
Ֆ. + 374 10 260 961

Grant Thornton CJSC
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia
T + 374 10 260 964
F + 374 10 260 961
www.gta.am

«Ռ-Տելեկոմ» ՓԲԸ -ի բաժնետիրոջը

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ռ-Տելեկոմ» ՓԲԸ («Ընկերություն») կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Ֆինանսական հաշվետվությունների համար տնօրինության պատասխանատվություն

Ընկերության տնօրինությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այս պատասխանատվությունը ներառում է՝ խաբեության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգի սահմանում, կիրառում և պահպանում, հաշվապահական հաշվառման համապատասխան քաղաքականության ընտրություն և կիրառում, ինչպես նաև տվյալ հանգամանքներում ողջամիտ հաշվապահական գնահատումների կատարում:

Աուդիտորի պատասխանատվություն

Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք պահպանենք մասնագիտական վարքագծի կանոնները, աուդիտը պլանավորենք ու իրականացնենք այնպես, որպեսզի ձեռք բերենք ողջամիտ հավաստիացում՝ ֆինանսական հաշվետվությունների՝ էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ:

Grant Thornton

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցներ ձեռք բերելու նպատակով ընթացակարգերի իրականացում: Ընթացակարգերի ընտրությունը հիմնված է աուդիտորի դատողության վրա, ներառյալ խաբեության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը: Այս ռիսկերը գնահատելիս աուդիտորն ուսումնասիրում է Ընկերության ֆինանսական հաշվետվությունները կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու անհրաժեշտ ներքին վերահսկողության համակարգը՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր ընտրելու, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության, տնօրինության կողմից կատարած հաշվապահական գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատում:

Մեր համոզմամբ՝ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Հարցի շեշտադրում

Առանց վերապահումով կարծիք արտահայտելու՝ մենք Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ 13-ին և 20.1-ին, որտեղ նշվում է, որ Ընկերությունը ստացել է փոխառություններ կապակցված կողմերից: Համաձայն պայմանագրի պայմանների այդ փոխառությունները ենթակա են ամբողջությամբ մարման 2012թ. և 2013թ., սակայն Ընկերության ղեկավարությունը մտադրություն ունի մարել այդ փոխառությունները պայմանագրային ժամկետից շուտ և դասակարգել է դրանք ֆինանսական հաշվետվություններում համապատասխանաբար: Եթե Ընկերությունը վերանայի իր մտադրությունները փոխառությունների մարման ժամկետի վերաբերյալ և մարումները կատարի պայմանագրին համաձայն, փոխառությունների հաշվեկշռային արժեքները և դասակարգումը կարող են էապես տարբերվել:

Ապրիլի 18, 2011թ.

Գագիկ Գյուլբուդաղյան — Տնօրեն-գլխավոր գործադիր տնօրեն

Լիլիթ Ավաբաջյան, CCA — Աուդիտի գլխավոր գործընկեր

Որակավորված աուդիտորներ եւ հաշվապահներ, կառավարման եւ հարկային խորհրդատուներ, իրավախորհրդատուներ
Auditors and Chartered Accountants, Management, Tax and Legal Consultants
Գրանթ Թորնթոնն Միջազգային կազմակերպության անդամ
Member of Grant Thornton International Ltd

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	56,805,419	70,933,375
Ոչ նյութական ակտիվներ	5	6,676,834	2,638,970
Չապահովված փոխառություն կապակցված կողմին	6	13,146,098	12,965,898
Հետաձգված հարկային ակտիվներ	7	339,966	340,330
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռք բերման համար		1,168,299	4,263,509
		78,136,616	91,142,082
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	2,934,720	1,873,747
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	9	14,959,272	13,826,026
Կարճաժամկետ փոխառություններ աշխատակիցներին		556,947	511,381
Ընթացիկ հարկային ակտիվներ		-	3,341,784
Մինչև մարման ժամկետը պահվող ավանդներ	10	8,984,064	10,175,359
Մնացորդներ դրամարկղում և բանկերում	11	1,335,912	1,647,222
		28,770,915	31,375,519
Ընդամենը ակտիվներ		106,907,531	122,517,601

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կապիտալ և պահուստներ	12		
Բաժնետիրական կապիտալ		550,000	550,000
Պահուստային կապիտալ		82,500	82,500
Կուտակված շահույթ		59,360,485	46,496,875
		59,992,985	47,129,375
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ կապակցված կողմերից	13	26,885,218	26,681,487
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ		294,233	122,791
		27,179,451	26,804,278
Ընթացիկ պարտավորություններ			
Փոխառություններ կապակցված կողմերից	13	12,257,125	41,836,695
Հետաձգված եկամուտ		1,872,093	2,053,190
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	14	5,260,440	4,694,063
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		345,437	-
		19,735,095	48,583,948
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		106,907,531	122,517,601

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2011թ. ապրիլի 14-ին՝

Ռալֆ Յիրիկյան
Գործադիր տնօրեն

Վարդան Թորոսյան
Գլխավոր հաշվապահ

«Ղ-ՏԵԼԵԿՈՄ»
«K-TELECOM»
01551651

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Համախառն գործառնական հասույթ			
Շարժական կապ	15	54,272,025	58,909,451
Միջազգային փոխկապակցման ծառայություններ		18,356,457	18,816,252
Ռոումինգ ծառայություններ		2,912,047	1,724,351
Ավելացված արժեքի ծառայություններ		1,339,437	775,728
Այլ		804,724	68,571
		77,684,690	80,294,353
Համախառն գործառնական ծախսեր			
Լիցքավորման և SIM քարտերի ինքնարժեք		(853,724)	(1,298,135)
Վճարումներ դիլերներին		(2,266,003)	(2,522,556)
Միջազգային փոխկապակցման ծառայություններ		(10,719,787)	(11,474,508)
Ցանցի շահագործման այլ ծախսեր		(6,634,812)	(4,810,551)
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում		(21,733,059)	(18,188,833)
Աշխատավարձ և հատուցումներ աշխատակիցներին		(7,427,142)	(7,141,590)
Կառավարման վճար		(1,394,075)	(1,318,699)
Այլ գործառնական ծախսեր, զուտ	16	(15,008,276)	(9,521,945)
Գործառնական գործունեությունից շահույթ		11,647,812	24,017,536
Ֆինանսական եկամուտ	17	1,224,955	1,368,997
Ֆինանսական ծախսեր	17	(2,354,572)	(3,708,723)
Այլ ֆինանսական արդյունքներ	18	6,033,001	(10,378,213)
Շահույթ մինչև հարկերը		16,551,196	11,299,597
Շահութահարկի գծով ծախս	19	(3,687,586)	(4,809,542)
Տարվա շահույթ		12,863,610	6,490,055
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		12,863,610	6,490,055

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Բաժնե-տիրական կապի-տալ	Պահուս-տային կապիտալ	Կուտակ-ված շահույթ	Ընդամենը
2009թ. հունվարի 1-ի դրությամբ	550,000	82,500	40,006,820	40,639,320
Տարվա շահույթ	-	-	6,490,055	6,490,055
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	6,490,055	6,490,055
2009թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	550,000	82,500	46,496,875	47,129,375
Տարվա շահույթ	-	-	12,863,610	12,863,610
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ	-	-	12,863,610	12,863,610
2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	550,000	82,500	59,360,485	59,992,985

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազար դրամ	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Շահույթ հարկումից հետո	12,863,610	6,490,055
Ճշգրտումներ		
Մաշվածություն, ամորտիզացիա և արժեզրկում	21,733,059	18,188,833
Տոկոսային ծախս	2,354,572	3,708,723
Տոկոսային եկամուտ	(1,224,955)	(1,368,997)
Շահութահարկի գծով ծախս	3,687,586	4,809,542
Հիմնական միջոցների օտարումից վնաս	18,780	2,028
Դեբիտորական պարտքերի պահուստի գծով ծախս	2,001,188	780,100
Ստացված ոչ դրամային ծառայություններ	522	1,467,912
Փոխարժեքային տարբերությունից (օգուտ)/վնաս	(6,033,001)	10,378,213
Գործառնական շահույթ նախքան շրջանառու կապիտալի փոփոխություններ	35,401,361	44,456,409
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի փոփոխություն	(3,181,477)	4,710,805
Աշխատակիցներին տրամադրված փոխառությունների փոփոխություն	(45,566)	(203,460)
Հետաձգված եկամտի փոփոխություն	(181,097)	283,363
Պաշարների փոփոխություն	(1,060,973)	230,973
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի փոփոխություն	263,853	338,529
Ոչ ընթացիկ պարտավորությունների փոփոխություն	188,044	(20,775)
Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ	31,384,145	49,795,844
Վճարված տոկոսներ	(452,142)	-
Վճարված շահութահարկ	-	(6,732,132)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	30,932,003	43,063,712

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2010թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2009թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(8,228,356)	(20,369,076)
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր		84,717	5,167
Ներդրում կարճաժամկետ ավանդներում		(7,741,954)	-
Ստացված տոկոսային եկամուտ		532,393	628,716
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(15,353,200)	(19,735,193)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Մարված փախառություններ, զուտ		(24,789,420)	(21,651,688)
Ֆինանսական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(24,789,420)	(21,651,688)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		(9,210,617)	1,676,831
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		177,708	3,857,099
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա սկզբում		11,822,581	6,288,651
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարվա վերջում	25	2,789,672	11,822,581

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ: